

Ռ. Ս. Ղազարյան

ԲԱԶՄԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բազմակի գլխավոր անդամներով, այսինքն՝ մեկից ավելի ենթականերով և ստորոգյալներով կազմված և լեզվաբանական գրականության մեջ միավորյալ անվանված նախադասությունները մերթ համարված են բարդ, մերթ պարզ և ըստ այնմ էլ որոշված է նրանց տեղը լեզվի քերականության համակարգում: Հայերեն քերականության մեջ դրանք զետեղված են բարդ նախադասության բաժնում, իսկ ռուսական ակադեմիական քերականության մեջ՝ միացված բազմակի անդամներ ունեցող նախադասությունների հետ և քննված իբրև պարզ նախադասություններ:

Մենք չանդրադառնալով հարցի պատմությանը և այդ առթիվ եղած տեսակետների շարադրմանը, բայց ընդունելով կարծիքները այն լեզվաբանների, որոնք այդ տիպի նախադասությունները դիտել են իբրև ինքնուրույն կառուցվածք ունեցող և ոչ բարդ, ոչ էլ պարզ սովորական նախադասությունների հետ նույնացող խոսքային միավորներ՝ որոշեցինք քննել դրանք առանձին իբրև բազմակի գլխավոր անդամներով նախադասություններ:

Արդեն ցույց է տրված, որ միավորյալ նախադասություններ տերմինը չի արտացոլում խոսքի հիշյալ միավորների բուն էությունը և ավելի շուտ բխում է ֆորմալ տրամաբանության և ոչ թե լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից: Այդպիսի նախադասությունները ինքնուրույն կիրառություն ունեցող խոսքային այնպիսի ամբողջական միավորներ են, որոնք չի կարելի տրոհել կամ տարբեր նախադասությունների վերածել առանց աղճատելու դրանց իմաստը, կամ ճապաղ դարձնելու ոճը: Այսպես, օրինակ՝ Հուլիոս Կեսարի «Եկի, տեսի, յաղթեցի» արտահայտությունը, որը կազմված է բազմակի ստորոգյալներից, չի կարելի բաժանել երեք առանձին նախադասությունների առանց թուլացնելու կամ աղճատելու այդ ներդործուն դարձվածքի իմաստը: Սույնը և հետևյալ «Գողն և զողակիցն ի միում պատժի են» բազմակի ենթականերով նախադասությունը չի կարող տրոհվել, որովհետև այդ դեպքում նա կկորցնի իր իմաստը: Մեր ասածները վերաբերում են միավորյալ կոչված նախադասություններին ընդհանրապես. անկասկած, կարող են նման տիպի նախադասությունների մեջ հանդիպել այնպիսիները, որոնց տրոհումը իմաստային այնպիսի աղճատում չհարուցի, ինչպես վերոհիշյալներին, թեև տեսականորեն ընդհանրապես կարելի է բացառել խոսքի ընդհանուր շղթա կազմող օղակների մասնատումը՝ նրա իմաստի ու ձևի անաղարտ պահպանման պայմաններում:

* * *

Նախադասության բազմակի անդամների ֆունկցիայով կարող են հանդես գալ ենթական և ստորոգյալը, նույնպես և տարբեր կարգի լրացումները: Սակայն նրանք տարբերվում են միմյանցից իմաստով և կատարած դերով. բազ-

մակի ենթականերն ու ստորոգյալները նախադասության մյուս անդամների հետ առնչվում են ոչ թե ստորադասական, այլ անկախ հարաբերություններով, իսկ բազմակի լրացումները միմյանց նկատմամբ համադաս լինելով հանդերձ լրացնում, պարզաբանում են նախադասության որևէ այլ անդամի միտքը, ճշգրտում նրա մասին ասվածը և այլն, հետևաբար նրանք քերականորեն հավասար վիճակի մեջ լինելով միմյանց նկատմամբ՝ ստորադասվում են մի երրորդ անդամի և դրանով տարբերվում են բազմակի ենթականերից ու ստորոգյալներից, որոնք ստորադասության հարաբերություններով չեն կարող հանդես գալ նախադասության մեջ: Նախադասության բազմակի անդամների այդ առանձնահատկությունը նկատի ունենալով՝ չի կարելի միևնույն ձևով մոտենալ դրանց և տարբերություններ չդնել նրանց և նախադասության բազմակի լրացումների մեջ այնպես, ինչպես արված է սովորականի դերականության ակադեմիական ձևնարկում:

Հին հայերենում բազմակի գլխավոր անդամներով նախադասությունները կարող են լինել բազմակի ենթականերով, բազմակի ստորոգյալներով կամ բազմակի ենթականերով ու ստորոգյալներով, օրինակ՝ «Իննի և արեցուրիւն ապականեն զարս իմաստուն», «Լուայ զձայն քո ի դրախտի աստ և երկեայ», «Յուցանէր, թե հաււ և օղ և երկիր կենդանի ինչ իցեն և մեռանիցին»:

Բազմակի գլխավոր անդամներով նախադասությունները գրաբարում ունեն իրենց առանձնահատկությունները, որոնցից պետք է նկատի ունենալ հետևյալը.

1. Այդ տիպի նախադասությունների ենթակաները կարող են դրվել.

ա) ուղղական հոլովով, օրինակ՝ «Ջգաստուրիւն և իմաստուրիւն պիտոյ են մեզ» (Վարք հրց., Բ), «Մեղուն և մըջիւնն վատաց վարդապետք լինին» (Չխ., էջ 211), «Զիա՞րդ չէականմն և շմշտնջենաւոր՝ ընդ էականին և ընդ մշտնջենաւորին երկրպագութիւն առնուցուն» (Եզն., Դ, էջ 10):

բ) սեռական հոլովով, օրինակ՝ «Զոր առեալ անձնագեղոյն և Բաշաղեղան արին Վաղարշակ, կոռովաբանոյն և հաննարեղի, առաջին իւրոյ զանձուն համարելով՝ զնէր յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ» (Խոր., 1, Թ, էջ 33—34): Այս նախադասության մեջ լրացումները (ընդգծված բառերը) գիտակցված են իբրև ենթակա և համաձայնեցված են ստորոգյալի հետ սեռական հոլովով, իսկ բուն ենթական՝ Վաղարշակը, դրված է ուղղական հոլովով, որովհետև ընդգծված են նրա հատկանիշները:

«Տեսեալ արդարոց ծիծաղեցան, անաբատին՝ և արհամարհեաց» (Յոր. Իր., 19) (Տեսան արդարները ծիծաղեցին, (տեսավ) անարատը արհամարհեց): Սի այլ օրինակ՝ «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեռ ընդ իս» (Եզն., էջ 100):

գ) տրական հոլովով, օրինակ՝ «Եւ նորա ակն ունէին նմա այտնոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ» (և նրանք սպասում էին, որ նա կուռչի. կրնկնի կամ հանկարծակի կմեռնի, Գործ. Առաք. Իր, 6): «Այլ արդ թուլացո՞ւնն զօղել ուրեք վաչրկեան մի ժամանակի, մինչև ողի առեալ՝ անցանել կարացից յերկիրն Յունաց» (այլ արդ թուլացրու, որ ես թաքնվեմ կարճ ժամանակ մի տեղ, մինչև շունչ առնեմ և կարողանամ Հունաց երկիրն անցնել, Խոր., 3, ԼԳ, էջ 299), «Այսպես և զիւ ամենեցուն փրծանել յերկիր եւ ապրել» (այսպես բոլորն էլ ցամաք դուրս եկան և ազատվեցին, Չխ., էջ 216): «Անհնար է խոտու և ուրոյ ի միասին կեալ» (խոտը և հուրը միասին լինել անհնար է, Չամչ., էջ 447):

2. Բազմակի գլխավոր անդամներով նախադասությունների ստորոգյալները կարող են արտահայտվել բայերի դիմավոր ձևերով և դերբայներով, լինել պարզ ու բաղադրյալ, բայական ու անվանական, օրինակ՝ «Առնալ այնուհետև երանելուն զհավատացեալս իւր, զիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան» (Կոր., էջ 40)։ Նախադասության ստորոգյալները արտահայտված են դերբայներով և դիմավոր ձևով, որոնք թարգմանելիս պետք է համաձայնեցվեն, այսինքն՝ դիմավոր դարձվեն, ինչպես վարվել է Մ. Աբեղյանը (Երանելին այնուհետև իր հավատացյալներին առավ, գնաց, իջավ Գողթանի անկարգ ու անխնամ (թողած) տեղերը)։ Նույն նախադասության հաջորդող պարբերության մեջ կարելի է հանդիպել դիմավոր, բաղադրյալ և դերբայական ստորոգյալների. «Այլ քնդառաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր, որում անունն էր Շաբիթ, և ապանշական հիւրամեծար գտնալ՝ բարկաշողութեամբ սուսաւալորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելուն վաղվաղակի դաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ծեռն արկանէր զդաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին.— զերեւալ դամենեսիան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւպաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր»։ Այս պարբերության մեջ բաղադրյալ ստորոգյալի իմաստով են կիրառված քնդառաջ ելանէր, ծեռն արկանէր կապակցությունները։

Միմյանց անմիջապես հաջորդող բազմակի ստորոգյալները իրար հետ շաղկապվում են ստորակետներով, համադասական շաղկապներով, կամ, եթե հանդիս են գալիս դիմավոր և դերբայական ձևերով, հաջորդում են միմյանց առանց որևէ շաղկապի կամ կետադրության, օրինակ՝ «Եւ ի տալ Զրուանայ զբարսմունսն ցորմիդդ և օրնել ղնա» (անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալները իրենց լրացումներով հանդերձ միմյանց հետ միացած են և շաղկապով, Եղն., 2-րդ, էջ 80), «Առնալ այնուհետև երանելուն զհաւատացեալս իւր, զիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան» (Կոր., էջ 40)։ Այս օրինակի մեջ երկու ստորոգյալներ արտահայտված են անցյալ դերբայներով (առեալ, դիմեալ), իսկ մեկը (իջանէր)՝ անցյալ անկատար ժամանակով։ «Որոյ յանձն առեալ և եկեալ, և զբազումս ի նախարարաց կանանց կալեալ՝ ի բերդս տաւր պառնել, զդարձ արանցն յուսալով» (որը հանձն առավ ու եկավ, նախարարներից շատերի կանանց ձերբակալեց և տարբեր բերդերում հրամայեց պահել՝ հուսալով նրանց ամուսինների վերագարձը, Խոր., 3, 12. էջ 302, 303). «Եվ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն տպանին, զոմն ֆարկոծեցին» (Մատթ., ԻԱ, 35—36)։

3. Բազմակի գլխավոր անդամներով նախադասությունների ենթական, եթե արտահայտված է անձնական դերանուններով և չի ընդգծված, սովորաբար ղեղավում է, օրինակ՝ «Զպարարակ իմ զեկեալ է և զճաշ իմ պատուաւտեալ է» (իմ պարարակը գեներված է և իմ ճաշը պատրաստված է (նրանց կողմից), Բգր., էջ 414)։ «Մինչ չև ծնեալ Լիւն, և մինչ չև բարի ինչ կամ չար գործեալ էր» (քանի դեռ չէին ծնվել, և չար կամ բարի որևէ բան չէր գործվել, նույն տեղում, էջ 415)։ «Եթե հաւաստեալ ինդրիցեմք, գտանիցեմք» (Թոռ., Ա, էջ 257)։

4. Դերանուններով շարտահայտված բազմակի ենթակաները կարող են կրճատվել այն դեպքերում, երբ կոնտեքստի իմաստից հասկացվում են, օրինակ՝ «Յայնժամ մեծացոյց յոյժ թագատրն զՏրդատիոս և մեծամեծ պարգեւս ետ նմա. թագ կապեալ ի գլուխն նորա եւ ծիրանեօք զարդարեալ մեծացոյց ղնա».

Եւ կայսերակերպն զարդու շքեղացուցեալ մեծարեաց զնա, եւ դումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, եւ արձակեաց յիրական աշխարհն Հայոց» (Թոռ. Բ, էջ 219—220):

5. Դերբայով արտահայտված ստորոգյալների օժանդակ բայը սովորաբար զեղչվում է, օրինակ՝ «Ոչ խօսեալ նոցա երբէք և ոչ իմացեալ և ոչ զմտաւ ինչ ածեսայ» (Բգր., էջ 416): «Ջայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ խոսրովիղխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով» (Խոր., Ղ, էջ 243): Այդ տիպի նախադասությունների մեջ կնքող են կրճատվել նաև անորոշ և անցյալ դերբայներով արտահայտված ստորոգյալները, օրինակ՝ «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, հեզ, ցած, պարկեշտ, հիրասէր, ուսուցիչ. մի թշնամանող, մի հարկանող, այլ հանդարտ, մի կռուող, մի արծաթասէր» (Իմա լինել. Ս. գ. Տիմ., Գ, 2—3):

6. Տարբեր ենթականների միևնույն ստորոգյալներից հաճախ միայն մեկը կարող է արտահայտվել, օրինակ՝ «Եղիցի երկիրն ձեր աւերակ և քաղաքքն ձեր թափուրք» (Բգր., էջ 418): «Ոչ ոք է՝ որ որոմն սերմանէ, և ցորեան հնձէ, և կամ ցորեան, և որոմն» (Իմա ոչ ոք է, որ որոմն սերմանէ, և ցորեան հնձէ, և կամ ցորեան սերմանէ, և որոմն հնձէ (նույն տեղում, էջ 419):

7. Հին հայերենում մի շարք կապակցությունների բազմակի ստորոգյալները կամ օժանդակ բայերը ընդհանրապես չեն արտահայտվում. «Ըստ Հիպոկրատեայ՝ կեանք սուղ և արուեստ երկայն» (Բգր., էջ 420, իմա է), «Ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո և պարանոց մեր» (նույն տեղում, իմա են): «Հազարապետք՝ բազումք, սակայն հաւատարիմք սակաւ» (նույն տեղում, իմա են):

8. Բազմակի զլխավոր անդամներով նախադասությունների համաձայնության կանոնների մեջ նկատի պետք է ունենալ հետևյալը.

ա) Բազմակի ենթականների ստորոգյալները իբրև ընդհանուր կանոն դրվում են հոգնակի և դեմքով համաձայնեցվում են, օրինակ՝ «Եւ թէ ջուր, թէ հուր, թէ երկիր, թէ օդ, թէ իցեն և թէ շիցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն» (Եզն., էջ 11), «Ճախարակեայ գործեսցես զաշտանակն. բունն և ստեղծումն և սկանն և գնդակն և շուշանն և անդստին ի նմանէ իցեն» (Ելք., ԻԵ, էջ 31), «Եւ ամենայն զագան և ամենայն սողուն շարժուն և ամենայն բոշուն յերկրէ քստ ազգի իրեանց ելին» (Մնդ., Ը, 19):

բ) Եզակի ենթակայով նախադասության բազմակի ստորոգյալները դրվում են եզակի, օրինակ՝ «Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն Արծրունի և շոգաւ եկաց առաջին թագաւորին Պարսից Շապհոյ, և ղնէր ընդ նմա ուխտ երդամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա» (Բուզ., 4, Իգ, էջ 216), «Եւ զիա՞րդ գիրք ասիցեն զօձէն զալ և խաբել. և ընդ խաբեութեանն առնուլ պատուհաս» (Թոռ., Լ, էջ 312), «Ոչ է ումէք հանգիստ գտանել ի սմա կամ հեշտեալ ելանել ի սմանէ» (Չամչ., էջ 447):

գ) Բազմակի ենթականներով նախադասության ստորոգյալը կարող է դրվել եզակի:

1. Երբ ենթակաները հոմանիշ կամ իմաստով մոտ են միմյանց, օրինակ՝ «Փայտ, խոտ և եղեգն վաղվաղակի ապականի ի հրոյ» (Զլխ., էջ 211), «Յանձրևարար ամպոյ դաշտ և այգի պայծառացեալ ծաղկալից լինի» (նույն տեղում), «Եւ մեծացաւ այրն յոյժ, և եղև նորա ոչխար և արջառ յոյժ, ծառայի և աղախնայի, ուղտի և էջի» (Մնդ., 1, 43), «Յորում էր ամենայն շորհոտանիւ և սողունի և քնիւ և բոշունի և քնիւ» (Բգր., էջ 255):

II. Երբ բազմակի ենթականերից մեկը իմաստով գլխավորն է, իսկ մյուսները կապված են նրա հետ կամ երբ բոլոր ենթակաները ընդգծվում են, օրինակ՝ «Ի լիութեան հացի և յղիութեան գինւոյ՝ փափկանայր ինքն և դստերիւր» (Եզեկ., Ժզ, 49), «Բարձաւ քագատուր և Բահանայ, խորհրդական և ուսուցիչ» (Խոր., 3, Կր, էջ 369), «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսէպոս և Հիւղոդիտայ և այլք բազում Հունաց» (Խոր., 2, Զ, էջ 113), «Ճաշուր յայնմիկ հոմոտ Նոյ, Սէմ, Քամ, Յաբեք, ուղիւ նոյի, կին նոյի, և երեք կանայի որդւոց նորա ընդ նմա ի տապան անդր» (Մնդ., է, 13):

III. Երբ բազմակի ենթակաների ստորոգյալը արտահայտված է հրամայական կամ ստորադասական եղանակով, օրինակ՝ «Իշխեա մեզ դու և ուղի բո. և որդի որդւոյ բո» (Դատ., Ը, 22), «Եւ ի տապանէ այտի դու և կին բո և ուղի բո և կանայի որդւոց բոց և ընդ քեզ» (Մնդ., Ը, 16), «Եւ մտցես ի տապանն դու և ուղի բո և կին բո և կանայի որդւոց բոց ընդ քեզ» (Մնդ., Զ, 18—19), «Մի գործեսցես ի նմա զամենայն գործ բո, դու և ուսուր բո և դուստր բո և ծառայ և աղախին բո, եզն բո և էջ բո և ամենայն անասուն բո, և եկն որ ի ներքո դրանց բո. զի հանգիցէ ծառայն բո և աղախին բո որպես և դու» (Երկ. օր., Ե, 14), «Եւ ուրախ լիցիս ի տօնի բում՝ դու և ուսուր բո՝ և դուստր բո, ծառայ բո, աղախին բո» (Զամշ., էջ 457):

Վերահիշյալ տիպի նախադասությունների մեջ ստորոգյալը սովորաբար նախադաս է լինում և դեմքով համաձայնում է այն ենթակային, որը մյուսների համեմատությամբ առաջինն է. այսինքն՝ եթե նախադասությունը ունի առաջին և երկրորդ դեմքով ենթականեր, ստորոգյալը համաձայնում է առաջինի, իսկ եթե երկրորդ և երրորդ, երկրորդի հետ, օրինակ՝ «Հաւատասցես բանի նորա դու և եղբար բո, և ամենայն, որ հնազանդին քեզ կամաւ» (Զամշ., էջ 457):

դ) Դերանուններով արտահայտված բազմակի ենթականերով նախադասությունների ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի և դեմքով համաձայնում է առաջին, իսկ եթե երկրորդ և երրորդ դեմքերով են ենթակաները, երկրորդ դեմքի հետ, օրինակ՝ «Եթե մեղիցէ քեզ եղբայր բո, երթ հանդիմանեա զնա, յորժամ դու և նա միայն իցէի» (Մատթ., Ժբ, 15), «Հաւ Եւս և դու ընդ միմեանս» (Զլխ., էջ 212), «Եւ և դու հեծեալ էալ ի զոյգս» (Բգր., էջ 258), «Դու և Եւ մի Եմի» (նույն տեղում), «Եւ և դու ամենայն բազմութիւնդ հանդերձարի թագաւորանդ այնպէս աշակերտեսցուք» (նույն տեղում):

Սակավ դեպքերում ստորոգյալը դեմքով համաձայնում է իրեն մոտ ենթականի հետ, օրինակ՝ «Զի մի մեղանիցին և նոյա և դուր», «Արա զկամա դորա, և կեսց դու և մեք», «Զի՛նչ դու իմանայցես և ո՞ւր մեք» (Բգր., 259):

Բերված նախադասություններից առաջինի ստորոգյալը համաձայնել է երրորդ դեմքի, իսկ երկրորդ և երրորդ նախադասությունների ստորոգյալները՝ երկրորդ դեմքի հետ, թեև նրանցից առաջինն ունի նաև երկրորդ, իսկ մնացածները առաջին դեմքի ենթականեր։ Համաձայնության ընդհանուր կանոններ

րից կատարված այդ շեղումները պայմանավորված են նախադասության տրամաբանական շեշտով և ընդհանուր իմաստով:

9. Բազմակի գլխավոր անդամներով նախադասություններից պետք է տարբերել այն նախադասությունները, որոնց ենթակաները կամ ստորոգյալները խոսքը ավելի ներգործուն դարձնելու կամ այլ նկատառումներով կրկնվում են կամ գործածվում իբրև ավելադրություն, օրինակ՝ «Մե՛ն անպակաս յամենայն ժամանակի ի տօնս տարեկանաց և յայլ աւուրս արժանաւորս չիշեմք մե՛ն զձեզ»:¹ «Ոչ այլ ո՛ր ի նմին տանէ գոյր ու՛ն», «Եթե՛ յազաւորի զաղքատի ո՛ր ցնցոտիս հրամայիցէ ո՛ր ազանել» (Բգր., էջ 444): Իբրև օրինակ վկայակոչված վերոհիշյալ նախադասությունները ունեն բազմակի ենթականեր, բայց նրանք միավորյալ կոչված նախադասություններից տարբերվում են ինչպես իրենց իմաստով, նույնպես և ձևավորմամբ: Նման նախադասությունների ենթակաների կրկնությունը պայմանավորված է իրենց ստորոգյալից ընդմիջած տարրեր բառերով բաժանված լինելու, ընդգծվելու և այլ հանգամանքներով: Այս տիպի նախադասությունները կարելի է անվանել կրկնակի կամ հավելադիր գլխավոր անդամներով նախադասություններ:

Ենթակաների նման հաճախ կրկնվում են նաև ստորոգյալները, օրինակ՝ «Եմ եմ և ես մարդ մահկանացու», «Այ և չէ իսկ մարթ», «Են եմ արդարև աւանդք այրեաց և որբոց ի պահ եղեալ» (Բգր., էջ 271): Այս նախադասությունների օժանդակ բայերը կրկնված են, որովհետև զրանով ընդգծված է խոսքի հիմնական իմաստը: Նրանք նույնպես տարբերվում են բազմակի գլխավոր անդամներով նախադասություններից ինչպես իրենց իմաստով, նույնպես և ձևով: Վերոհիշյալ կարգի նախադասությունները կարելի է համարել պարզ, որոնց գլխավոր անդամները, թեև կրկնված են, բայց միևնույն դերն են կատարում՝ առանց փոխելու նախադասության ձևն ու նրա անդամների քերականական կապակցությունը:

Մենք փորձեցինք ցույց տալ գլխավոր անդամներով նախադասությունների հիմնական առանձնահատկություններն ու զրահորումները շներթափանցելով մանրամասների մեջ:

Գլխավոր բազմակի անդամների համաձայնության կանոնները նշելիս՝ տեսանք, որ զրանք հիմնականում նույնանում են պարզ նախադասության անդամների համաձայնության հետ: Այդքանով նրանք մոտենում են պարզ նախադասություններին, բայց իրենց արտահայտած իմաստով նրանք ավելի բարդ ու բազմապիսի են և մոտենում են բարդ նախադասություններին: Նրանց այդ հատկանիշը նկատի առնելով կարելի է զրանք համարել խոսքի այնպիսի միավորներ, որոնք գրավում են միջին տեղը պարզ և բարդ նախադասությունների մեջ, թեև իրենց անդամների կապակցությամբ չեն տարբերվում պարզ նախադասություններից:

Հաճախ այդ միավորների գլխավոր անդամները լրացվում են տարբեր բառերով ու նախադասություններով, որոնք ավելի բազմազան են դարձնում զրանք, օրինակ՝ «Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բաղում, և վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ երկրին, և յորժամ ծագեաց արև՝ ջնուաւ, և զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ» (Մարկ., Դ, 5—7):

Նման տիպի ընդարձակ նախադասությունները արտաքուստ չեն տարբերվում բարդ նախադասություններից, թեև ըստ էության մի ամբողջական միտք են արտահայտում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ

- Բզր.—Բաղրատունի Ա., Հայերէն բերականութիւն ի պէտս դարգացելոց, Վե-
նետիկ, 1852:
Բուդ.—Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
Եզն.—Եզնրկայ Վարդապետի Կողրացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
Թոռ.—Թոռնեան Թ., Հատրնտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախ-
նեաց, Վիեննա, Ա հտ., 1891, Բ հտ., 1910:
Խոր.—Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
Կոր.—Կորին, Վարք Մաշտոցի, Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածնե-
րով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրութիւններով ի ձեռն
պրոֆ. դ-ր Մանուկ Արեղյանի, Երևան, 1941:
Չամչ.—Չամչեան Մ., Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779:
Չիւ.—Չալրիսյան Վ., Այտրնյան Ա., Քերականութիւն Հայկազեան լեզուի,
Վիեննա, 1885:
Աստվածաշնչի օրինակները բերված են Վիեննայի 1929 թվականի հրա-
տարակութիւնից:

Р. С. Казарян

СТРУКТУРА ПРЕДЛОЖЕНИЙ С ОДНОРОДНЫМИ
ПОДЛЕЖАЩИМИ И СКАЗУЕМЫМИ
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

Рассматриваемые в данной статье предложения в языковедческой литературе иногда рассматриваются как сложнослитные предложения, иногда как простые, исходя из этого определяется их место в грамматическом строе языка.

Соглашаясь с лингвистами, рассматривающими предложения данного типа как предложения с своеобразной структурой, которые не являются сложными и не сходятся с обыкновенными простыми предложениями, мы решили рассматривать их как предложения с однородными подлежащими и сказуемыми.

В статье автор раскрывает основные особенности и разновидности употребления предложений с однородными подлежащими и сказуемыми, основываясь на фактическом материале.